## ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ.

*
* *

Երբ տեսնում եմ, ինչպէս պայծառ
Եւ անարատ զգացմունքով
Խմբում ենք այս տօնի համար
Մենք գիտութեան անունով,
Վերանում են մութ կնճիռներ
Իմ ամպամած ճակատից
Եւ զէթ առ ժամ վիշտն ու հոգսեր
Հեռանում են իմ սրտից։

Եւ ասում եմ ես հաւատով.
Անցնելի չէ՞ այս գիշեր,
Թէ որ փայլին մի ջերմ լուսով
Առաւօտեան վառ շողեր։
Եւ այս օրն է այդ առաւօտ,
Որ բացում է մթան մէջ —
Թո՛ղ այդ լոյսը լինի աղօտ,
Միայն մնայ մի՛շտ անշէջ։

Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ.

27 Սեպտ. 1897.

## ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ „ԱՐԱՐԱՏ"

ԱԶԳՕԳՈՒՏ ԱՄՍԱԳՐՈՑ

ՅԷՋՄԻԱԾԻՆ.

Մեծ ու փոքր Սոկրատները շնորհակալութեամբ ստացայ, զոր հաճած էր Արժ. Աշխատասիրողը իմ անուան նուիրել.

Ցառաջաբանի (ԻԴ) այս եզրակացութիւնը, «Արդեօ՞ք Երուսաղէմի Ձեռագիրը Արարատեան դաշտից չէ՞ տարուել Հնդկաստան Շահաբասի գաղթականութեան ժամանակ և արդեօք նա համարեա մեր Ձեռագրի ժամանակակից լինելով՝ միմեանցից արտագրուած չե՞ն»։ — առիթ տուաւ ինձ գոնէ Ա. գիրքը բաղդատել, յորմէ կ'եզրակացնեմ, երկին Ձեռագիրները միմեանցից բոլորովին տարբեր օրինակներէ արտագրուած են. Երուսաղէմինը աւելի վստահելի և ընտիր օրինակ է լեզուի օրինաց համաձայն ընթերցուածովք. ուստի Էջմիածնի օրինակին մէջ աչքի զարնող պակասութիւնք չը կան մեր օրինակին մէջ.—Սա, Դա, Նա դերանուանց սեռականներուն, յատուկ անուանց ուղղականներուն, կամ Նախդրի—տրականներուն ծայրը յ աւելորդ տառը չը կա՛յ մեր Ձեռագրին մէջ. յօդերու և Նախդիրներու անճահ կրկնութիւնք և բառ պահանջելի տեղեաց պակասութիւնք հազուադէպ են. բայերու աներևոյթքներուն և անցեալ ընդունելութիւնք անխտիր միմեանց տեղ գործածուած չեն և ոչ կատարեալին եզակի երրորդ դէմքը իբրև անցեալ ընդունելութիւն և փոխադարձաբար.

Մենք այս մանր մունր տարբերութիւնք, որ ամեն էջի մէջ կը վխտան, զանց ընելով՝ գլխաւոր տարբերութեանց ցանկ մի պատրաստելով Ներփակեալ կը ղրկեմք պատուական «Արարատ»-ի խմբագրութեան, զոր եթէ պատշաճ և օգտակար դատէ, հրատարակութեամբ բանասիրաց ուշադրութեան յանձնէ.

Բաղդատութեան ցանկին մէջ թուանշանները էջերը ցոյց կը տան, իսկ տառանիշները տողերը. Ներգծեալք մեր օրինակին ընթերցուածներն են, և փակագծեալք, ինչպէս (սուրբ) թագաւորն կամ եպիսկոպոսն մեր օրինակին մէջ պակասածներն են համաձայն բնագրին.

Այս առթիւ աւելորդ չեմ համարեր ուղղել Արժ. Հօր մի ուրիշ սխալը, թէ Երուսաղէմ խնդր-

---

1. Շատ ուրախ եմ որ Երգարանը պարզում է այս խնդիրը. սխալը իմս չէ, այլ ինձ այդպէս էին ճանաչեցրել. որը, պէտք է խոստովանեմ, իր ժամանակին ինձ վրայ անախորժելի տպաւորութիւն թողեց: Մ. Վ.

ըել է իրենց Ձեռագրի մէկ ընդօրինակութիւնը, որպէս զի բաղդատութեամբ ի լոյս ածէ։ Երուսաղէմ միտք ունեցած չէ Սոկրատի Հրատարակութեան, վասն զի իւր միջոցները աննպաստ են, գոնէ առայժմ, այդպիսի ծանր և լուրջ գործի ձեռք տալ, այլ խնդրուած է ընդօրինակութիւնը՝ թերթատուած ձեռագիրը կարգադրելու համար։ Երանի՜ չը զլացուէր. թերևս բաղդատութիւն մի ընելով իրենց կը վերադարձուէր, եթէ ցանկութիւն յայտնէին, որով ներկայ Հրատարակութիւնը աւելի կատարեալ կը լինէր։ Թերի մասերու խնդրանքը չէ հասած առ մեզ, որով չեմք կարողացել բաւականութիւն տալ Արժ. Հօր։

Սահակ Եպիսկոպոս Խապայեան.

1897 թ. օգոստ. 20

յԵրուսաղէմ:

---

## ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆ ՏՊԵԱԼԻՆ
ԵՒ
## ՄԵՐ ՁԵՌԱԳԻՐ ՕՐԻՆԱԿԻՆ

---

### Ա. Գիրք.

2. գ. սկիզբն յորոց նոյն էինալ տրասցուք
» ժգ. եղեալ էջեալ յիտալիա
» ժե. ՚ի բլիտիա Կոստանդին կոչեցաւ թագաւոր
11. ե. և յայնչափ խանդեղութիւն իւրս հասան—հասանէր էրն
12. ա. ՚ի նմանաբար նոյն շարժմանէն
» գ. Մեղեդիանոսն որ սակաւ ինչ յառաջ
» գ. Եպիսկոպոս մի ոչ ՚ի քաղաքացն
» ժը. պատասխանատուութիւնս — պատասխանատուութիւնս
» ժէ. Աքիղա. սա որ յետ Պետրոսի — Ակիւղասոյ որ յետ . . .
13. ա. որ յետ Աքիղա սա եղեալ—Ակիւղասոյ եղեալ
» ի. ՚ի Մակեդոնիոյ ըմնկանունութիւնն անէին
14. ա. խաւթացեալ սգով—ոգւով
15. ժ. յամենայն տեղիս դրելովեկէց երկցեղեալք
» ժէ. ՚ի բաղում աշխարհաց և տաղատաց եպիսկոպոսունք
16. ժ. Այլ և Թրակացիք. Աքայեցիք և Մակեդոնացիք—Այլ և Թրակացիք և Մակեդոնացիք. Աքայեցիք և Իտալիացիք [1]
18. ժդ. և ժողովրդականք բազումք ՚ի փորձ—էորչ [2]
» ժը. և Թիւրինիս—Թէսդոնէս ըստ բնագրին [3]
20. ի առ միաձայնութիւն և համաձայնութեան
» ժե. բանսն ընդարձակեալ հանել—ընդարձակ հանել
21. գ. յԹրակիկիա Թուակա—Հերակլէ աթոռակալ
24. բ. նզովել զամբարշտութիւն նորա զկարծիս — զամբարշտութեան նորա կարծեաց
» ժգ. Նախադրութիւնս առնել — յեղափոխութիւն առնել
25. ժգ. յառաջագոյն ընդ Հրէից առնողաց
» ժէ. որք միանգամ ընդ ձեզ—որք է ակցեալ ընդ ձեզ
» ի բ. ուստի և զնա յայնժամ ժողով է բաց ընկեցեալ քահանայութենէն, ու մեայն ժողովն հոգ տարաւ
26. ժգ. Աստուածասէր սուրբ թագաւորն—սուրբ բառը ամեն տեղ կը պակասի
29. ե. և զխստութիւն—և դառնութիւն խիստ կանոնին սէր
» ժա. Այլ (յԱստուծոյ) սպասել կարողին և իշխանութիւն ունողին
» ժը. Զայս ճառեալ Ակիւղաս—Ակիլաս
» ժթ. շարադրողած (նշանակեալ) կրեցին
30. ա. Դափնութիւն—Դափնոսի
» դ. վիրաւորիւր զակնն—կորուսեալ էին զակնն
32. ա. պարկեշտութիւնն իւրաքանչիւր ուրուք ամուսնութեան (միաձուորութիւն) էրն պարկեշտութիւն կոչէր

---

1. Տպագրականն սխալ է. Մ. Վ.

2. Դուցէ «փախու(ս)ուցիչ» որոշել կինէր. Մ. Վ.

3. Դուցէ, «համամտութիւն», այդ է պահանջում յոյն բնագիրը, ինչ յետոյ (տող ժԴ) թարգմանուել է. «միաբանութեան». Մ. Վ.

և զարմանալի առանձնութեան Մկրտ-
չութեան

33· ը· Քանզի ըմիոյ ի քաղաքացն (Կիպ-րոսի)—Եպիսկոպոսէ

35· ը· ուրանաւր զանձն կայր—զարդն կայր

36· է· մինչև ցԹագաւորութիւնն նոր Թէ-ոդոսի եհաս—որ Թէոդոսէ եհաս

37· է· Առ այս ժամ[1] ածեալ—առ այս այժմ ածել

» ը· փրկել զկապեալն ի կապարանէն—ի մահուանէ

» ժգ· (առ) յաղագս նորա[2]

» ժէ· Թէ միշտ բերեմ զներումն կարե-ցելոյս·—Թէ ներէ բերէ ներման

40· Թ· Առաջուց յաղագս ամենեցունց (լռեալց)

41· ե· ընկալաւ զաթոռ—ժառանգէր զա-թոռ

42· բ· յեկեղեցի հանել զնոսա—յեկեղեցի զմանգանան հանել

» ե· ընկալեալ զնա ժողովոյն—և ընդա-ռեալ լինէր ի ժողովոյն

» գ· Զայս Ռուփին · · · համակարգեալն —է համակարգութեանն խրում ձա-ռեաց

» Թ· Արդ—Այլ զամ· առաքինութիւն ··· և զկատակ մեզ որու էր (Թե-րևս որ ունէր)[3]—և զկատակն զոր ցուցանէր

44· ը· Քաղաքիս կացուցանէր—դնէր

» գ· յապարիսխս ի նորին քաղաքիս—յապարանէ նոր քաղաքէս

46· գ· որք զՔրիստոսն իմացեալք ···· զգե-րեզմանն—որք զՔրիստոսէն իմա-ցեալ ····

» ը· Ծածկէին զգերեզմանն—ծածկէին

» ժը· Իսկ (մայրն) մայրն[4] արքայի յայա-նագոյն յայնժամ լինէր

» ժգ· և զաւեղի սրբել ··· զառնէ զխա-չըս—և զաւեղն սրբեալ ···[5]

1· Տպագրական սխալ է եւ ուղղուած· Մ· Վ·
2· Տպագրական սխալ է եւ ուղղուած· Մ· Վ·
3· Տպագրական սխալ է եւ ուղղուած· Մ· Վ·
4· Մեր Ձեռ· կայ «մաւրն» է· Մ· Վ·
5· Մեր Ձեռ· կայ և «զգեղին»·

47· ե· նախադրեալ—նախադրէ

» ժգ· ըմբռնել—եալ առ նմա (անցաւ) առաջ[1] և մահն լինէր

49· ը· իսկ զբեւեռսն Քրիստոսի, որ ի խաչին ցցեցան—իսկ զբեւեռսն, որք էին Քրիստոսի ի խաչին ցցեցան

50· ա· սեղանոն մատուցան(ելով) էր, բա-զում ինչս շնորհեալ էր եկեղե-ցեաց

» ը· և կանգնե(ա)լ զատաճարս արգելոյր

53· գ· ատենադրեալ—ատենադրէալ[2] հրա-մայէր· և վասն այսորիկ (խառնա-կութիւն) հակառակութեան լինէր

54· ժը· որպէս և Մովսէս յանապատին առնէր—կը պակսի մեր օրինակին մէջ·

55· գ· որպէս զԴուխտան աւան—որպէս զԿոստանդեան Դուխտան աւան

56· գ· Հայոց· չը կայ

57· ը· զոյգ ընդ (Հ)այս

58· գ· ըմբռնեալ ···· և զերկուս զպարե-գաւթն ի մանգունսն—ըմբռնեալ ···· և զերկուս զպարագաւթէ մանգաւնան

» է· իսկ զերկուս մանգունսն փոքունս ապրեցուցանէին—իսկ զերկու ման-գունս փոքունս հաստատեա ապրե-ցուցանէին տաճար ընդայ ծերեանց թագաւորին մահուանէն

59· դ· զգիմեալսն յաշխարհէն Հռովմա-յեցւոց վաճառականս խնդրել—զգիմեալսն յաշխարհն Հռովմայեցւո վաճառականս խնդրել, ևնէ զոր աս-րէր ի քրիստոնէացելոցն զա(եալ)ցէ

» ե· ի տեղիս ինչ հասանել առանցն ա-է զերկրպագելեան աղանին կատարել

» ժէ· որպէսզի ի Տիւրոսն փութայր —է Տեառն փութայր

60· ը· Զամենայն իրն ծանուցա(նելով) էր ուսուցանելով

» ժէ· Արժանաւորեալ քահանայ ողջեան

64· դ· վաղվաղակի փոփոխութեամբ[3] — վաղվաղէալ փոփոխմամբ

1· Մեր Ձեռ· այդպէս է· Մ· Վ·
2· Մեր Ձեռ· կայ և այդպէս· Մ· Վ·
3· Այդպէս արտագրուած է· Մ· Վ·

» ժե. կարգայր առ Աստուածն—պատաժան

» ժը. ոչ լինէր ուսանել.—տեսանել [1]

65. է. Հաւատացեալ .... ի ձեռն կնոջն, զամենայն զօրս ընդ իւր և վրայէս նո- ղէ և զպատասխանն տայ է Եժղեա-Ըէան մանգանն և կնոջն, այլ և զօրս ընդ որսոյ, պատմեալ(ս)

» ժը. գձեռս եկեղեցեացն Հոռոմոց—Հռովմայեցւոց

66. ը. գրնակեալն—զենակէլըն[2] այն քարշէր

67. ժզ. ի ժամանակին Կոստանդնի — առ Կոստանդնէ ժամանակաւն

68. գ. ընդդիմամարտ լինելով—լինէր

» է. այսպիսի բարեաց բերէ բերու- թիւնք — բարեբերութեան .... լինէր

» ը. ի ժամանակին—է Կոստանդնէ ժամա- նակն

69. գ. ի ձեռն Մանեա—Մանեհեա

72. ը. Այլ այսքան սուրթեանս զարգար —զարդեան զատատատանն (Աստուծոյ) ընդունէր, փան այս պատճառոյս (զարգար գատառատան Աստուծոյ այսպէս էառ թշուառականն) առ և- լորդ է,

» ժդ. լուեալ մասն[3]—վասն Մանիքէոսի

75. է. վեհագոյն խմաստութեանն ցուցա- նիւր—է մաստութեանն ցուցանիւր

76. է. յետ ժողովոյն առ ընդեան ամբոխիլ

» ժ. որովք ի նիկայն խոստովանէին, էր որպէս և մեք—խոստովան լինէր որ- պէս և մեք

77. դ. զՄոնտանայ չարափառութեանն— թեանն

» ժզ. և մի աստուածութիւն յերեսին էութեան զոլ խոստովանելով

78. գ. որպէս զի ոմանց ասել, ոչ միայն վասն Սաբէլի, այլ փան այլ ոչ—այ- լոյ (բարգաց պատճառաց

79. ժա. ոմանք—ոմանց զՆեստորիոս Պամփի- լեայ անկեալ—ածել յԱնտիոքայ

1. Արդեն արտագրուած է. Մ. Վ.
2. Մեր Ձեռ. այսպէս ունի: Մ. Վ.
3. Տպագրականն սխալ է:

» ժզ. սրոյ հանդերձել մերկանալ—մերձե- նալ

80. ժ. Ըթէ որպէս զայս կարացին գործել (պատմեցից)

82. ժ. ընդունիմ ըստ դէմ յանդիման և հանդերձ պատուով արձակեմ

84. ա. Մատուցանեն—մատուցանէին

85. բ. Աստուածապաշտ բարեպաշտութեանց —բարեպաշտութեանդ

88. 89ա. Սուտ լինել զընդդէմ,[1] Աթանասոյ Ճառեալսն

91. ժե. ձեռն մարդոյ ուստի առաքեալք— ձեռն մարդոյ ոչ ձեռամ ուստի ա- ռաքեալ

92. ժդ. խակ նա իբրև լուաւ—ձեռայ

93. ե. ժողով Եպիսկոպոսացն Հռոմայեցւոց —հաւաքեալ լինել ի մատուցումն աղաւթարանին (տան)

94. գ. Դիմոթէոսի—Դիոնէսէ

» թ. քանզի որ—հան զօր

95. ժդ. Զայս նախախնամութիւնն—ութեանն Աստուծոյ յառաջ պատրաստեաց —պեալ

98. ա. ըստ բնագրին

100. դ. ընկերաւք ոմանք—ոմանք

101. գ. Ագամանդայ—Ադամանդեայ

» գ. զի այսու յափշտակելով թագաւորն և ի բարկութիւն արկանելով—զայ- րացեալ Եաքառն և է Եարեկաւրեան նկանելով

102. ե. Այլ ևս ի Տոբիեոսի—է Տրեբեեեդա Գաղղիոյ կայր

103. գ. որպէս յԱմովսէն—է Մովսէսէ Ճառի

» ը. Նա յաւելէր Աստեռիոս—յարէր Ա- ստեռիոս

» ժե. և հակառակ նորա—նմա կամելով —կեղով

104. ա. ի Կոստանդինուպօլիս եկեալ—զայր յայնժամ և որոյ Սեբեստէ է Կոստանդ- նուպօլիս եկեղց

» գ. Մարկիւղոս ոչ խոստովանի — ոչ ընդունէր այրել

» է. յերեսին գիրսն անգեացեաց — ըն- կեայ

1. Տպագրականն սխալ է. Ձեռ. կայ. Մ. Վ.

» ը. բայց Մակեդոնոս յետ ընդ Սեղեկիոյ — Աքեդէկէոյ ժողովոյն
105. գ. (Սուրբ) եպիսկոպոսն
» ե. և խաղաղութիւն ոչ առեալ լինէր ի նոսա:

## ՄԵԾ ՍՈԿՐԱՏԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ԵՒ
## ԵՐՈՒՍԱՂԷՄԻ Ս. ՅԱԿՈՎԲԵԱՆՑ ՎԱՆՔԻ ՁԵՌԱԳՐԵՐԸ.

Գերապատիւ Սահակ եպիսկոպոսի տուած Սոկրատի և Եր. ձեռ. բաղդատութիւնը մեզ միջոց է տալիս այժմ աւելի որոշ կարծիք յայտնել երկու ձեռ. մասին, քան այն որ արդէն յայտնել ենք մեր հրատարակութեան յառաջաբանում (էջ ԽԴ). Սրբազանը բաղդատել է Սոկրատի միայն Ա. գիրքը և գտել է 111 տարբերութիւններ՝ բառերի, քերականական ձևերի, նախադասութիւնների, պակաս և աւել մասերի. Թէև նա գիտակցօրէն չէ նշանակել «գերանուանց եւն. ... աւելորդ յ-երը, յօդերու և նախդիրներու անհամ կրկնութիւնք ... բայերու աներևոյթներու և անցեալ ընդունելութեանց անխտիր միմեանց տեղ գործածութիւնը». և, կաւելացնենք մենք. մի շարք տպագրական սխալներ, որ մենք արդէն նշանակել ենք ուղղելիների մէջ (էջ 829 եւն.) և որ դժբախտաբար Սրբազանի ուշադրութիւնից վրիպել են. Կատարուած բաղդատութիւնը առանձին հետաքրքրութիւն ունի և ամբողջինը աւելի է ցանկալի կացուցանում. յուսանք որ Գեր. Հայրը ներողութիւն յանձն կառնէ մնացեալ վեց գրքերի բաղդատութիւնն էլ տալ, որով մենք թէ Սոկրատի կրկին ձեռագրերի ընթերցուածները կունենանք և թէ այդ առթիւ ես միջոց կունենամ մի քանի աչքի ընկնող տպագրական սխալներ ուղղելու, որ սպրդել են ճանապարհորդութիւնների պատճառով քանիցս ընդհատուած տպագրութեան մէջ.

Միայն առաջի գիրքը բաղդատելով, Սահակ եպիսկոպոսը երկու կարևոր եզրակացութիւն է անում ա. «Երկին ձեռագրերը միմեանցից բոլորովին տարբեր օրինակներէ արտագրուած են», և բ. «Երուսաղէմինը աւելի վստահելի և ընտիր օրինակ է լեզուի օրինաց համաձայն ընթերցուածովք». Երկու եզրակացութիւններն էլ որոշ չափով ուղիղ են. բայց ոչ վերջնական, մանաւանդ առաջինը. Սրբազանի տարբեր օրինակները նորից ամենայն զգուշութեամբ բաղդատեցինք մեր ձեռագրի, տպագրի և յոյն բնագրի հետ և հետևեալ խմբերն ըստացանք.

ա. Եր. ձեռ. անպայման ուղիղ է համեմատած յոյն բնագրի հետ հետևեալ դէպքերում. 11. ի. հասանէր իրն. 12. ա. նոցա. գ. որք. գ. միոյ. մե. Աքիւղասայ. 13. ա. Աքիւղասայ. ի. ունէին. 14. ա. ոգւով. 15. մ. քրիստոնէից. մէ. 16. մ. Թէև սխալ է «եպիսուստացիք», պէտք է լինէր «է(ի)պիռոտացիք». 18. մբ. Թէոգնիս. 20. ե. Թէև «համեմատութիւն» բառը այնքան էլ ուղիղ չէ երևում. 24. մգ. ձեռնադրութիւնս առնել. 25. մգ. ընդ հրէից. մէ. որք ի սկզբանէ. իբ. ժողովն ի բաց ընկեաց քարոզութիւն, ոչ միայն. 26. մգ. սուրբ չիք. 29. ե. զատուգութիւն. մբ. Աղեքսի. 32. ա. իսկ պարկեշտութիւն կոչէր և զուրբնաւքն ամուսնութեան մերձաւորութիւն. 35. բ. զորդն. 40. բ. լսողացդ չիք. 42. բ. զմանգունսն. ե. ընդգալեալ լինէր. գ. ի համակարգութեանն. 46. գ. զՔրիստոսին. բ. զանցլն. 47. ե. նախադրէ. 49. բ. իսկ զքեևոսն որք ի ձեռին Քրիստոսի ի խաչին ցցեցան. 50. ա. մատուցանէր ... շնորհեալ էր. 56. գ. Հայոց չիք. 57. բ. այս. 58. ե. տուեալ ընծայ իւրեանց Թագաւորին մատուցանէին. 59. դ. յաշխարհն Հռովմայեցւս վաճառականս .... եթէ զոք ուրեք. ե. առանձին առ ի քրիստոնէական աղաւթ կատարել. մէ. ի Տիւրոն 60. բ. ծանուցանէր. մէ. քահանայութեան. 64. ե. զաստուածսն. 65. ե. զամենայն զօրս ընդ իւր և Վրացիս կոչէ զպատահմունսն զառ ի բժշկութիւն մանգանն և կնոջն. մբ. Հռովմէացւոց. 68. ե. բարեբերութիւնք. 69. գ. Մանիքեա. 72. բ. զարժան դադաստանն. 75. ե. ի մատնութեանն. 76. ե. առ ընքեան. մ. խոստովան լինէր. 77. դ. չարափառութիւնն. մգ. էութիւնսն. 79. մա. ոմանց. մգ. մերձենալ. 82. մ. զնա դէմ յանդիման. 91. մէ. ոչ գիտեմ ... առնել. 92. մդ. գիտաց. 94. բ. քան զոր. 98. ա. անուանց ձևերը Եր. ձեռ. ուղիղ են. 100. դ. ոմամբք. 102. ե. Տրիբեոնդա. 103. գ. ի Մովսէս. 104. ա. յայնժամ և որոց Սերէոսին ի Կոստանդնուպաւլիս եկեղոց. գ. ոչ ձեռնարկէ. ե. ընկեաց. 105. գ. սուրբ չիք:

Ուրեմն 111-ից 64 անգամ բնագրի համաձայն ուղիղ՝ է աւելի քան կէսը.

Մեր ձեռագիրն է ուղիղ դարձեալ յուն. բնագրի համեմատութեամբ. 20. մե. յոյն բն. է՝ «յընդարձակ հանեալ», Թարգմանել է՝ «ընդարձակեալ

1. Թէև ես մտադիր եմ արդէն ուղղելու այդ սխալները մօտիկ ապագայում:

1. Տես նախընթաց համեմատութիւնը կէ
2. Տես համապատասխան ծանօթութիւնը: